


ԱՆԽԱՐԴԱՆ ՇԱԽՏՔՈՎ ՈՒ ՍԻՐՏՈՎ ԱՂՕԹԷ

Եթէ անխարդախ հաւատքով ու սրտովին աղօթես Աստուծոյ, մեղքերուդ համար թողութիւն եւ օրինազանցութիւններուդ համար քաւութիւն կը ստանաս եւ կը ժառագես երկինքի արքայութիւնը եւ իր անսահման բարութիւնը, կը ստանաս մարմնի առողջութիւն եւ հոգիի փրկութիւն, կ'ունենաս ուրախ օրեր, խաղաղ կեանք, հեռու բոլոր զրպարտողներէ: Աղօթքը բռնակալներու բարկութեան ալիքները կը զսպէ, Աստուծոյ բարկութիւնը կը մեղմացնէ, աղքատները կը հարստացնէ, տկարները կը զօրացնէ, հիւանդները կը բուժէ, կատաղի մոլութիւնները ետ կը մղէ, ամուլը ծնելու ատակ կը դարձնէ, անգաւակը բազմածին կ'ընէ, ծովուն ալիքներէն եւ գետի յորձանքներէն կը փրկէ, անօթիները կը կերակրէ, մերկերը կը զգեստաւորէ, կանխահաս մահերը կ'արգիլէ ու բոլորին փափաքները կը կատարէ՝ եթէ երբեք հաւատքով աղօթես:

Իւրաքանչիւր աղօթք պատարագ մըն է Աստուծոյ ուղղուած եւ եթէ ընկերոջդ հետ սիրով չես, քու աղօթքդ ընդունելի պատարագ մը չէ, որովհետեւ Աստուծոյ չի բարձրանար: Արդարեւ ան, որ իր ընկերոջ դէմ ոխ ունի, անհնար է որ իր աղօթքը առ Աստուած բարձրանայ, իսկ եթէ մէկը սիրազեղ սրտով աղօթէ, այնպիսին տակալին իր ձայնը չբաճրացուցած Տէրը պիտի ըսէ. - «Ահա ես եմ» (Ես. 58.9):

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎՐԼԴԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՍՏԱՏՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՄԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Մեծ եւ սքանչելի Խորհուրդով հիացած եւ լիացած հաւատացեալներու սրտերը բացուած են Աստուծոյ: Իւրաքանչիւր սրտի մէջ անթեղուած խնդրանք մը կայ աղերսանք մը կայ, որ պահու սրբազնասուրբ թելադրողականութեամբ թռիչք կ'առնէ, աղօթքի կը վերածուի եւ եկեղեցին՝ որպէս Նոր Երուսաղէմ, կ'ընդունի իրեն եկող հաւատացեալներուն ուխտերն ու խնդրանքները:

Նախ պատարագիչ քահանան առանձնական աղօթքով իր խնդրանքները կը ներկայացնէ պատարագեալ Աստուածորդւոյն, որպէսզի իր սիրով շաղախէ հաւատացեալներուն սրտերը, հաստատուն պահէ անոնց հաւատքը ...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2024

ԹԻՒ 45

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 24.1-13: Եփ. 5.15-33: Ղկ. 8.49-57

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ԴՈՒՎԱՍԻ 8.49-57

Սինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ վարդապետը»:

Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախճար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները, բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լսք. աղջիկը մեռած չէ, այլ՝ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին՝ որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի ե՛լ»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց՝ որ ուտելիք տան աղջկան:

ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻՍԵՆ ՀԱԻԱՏԱ՛

Քրիստոսի այս փառաբանական խօսքը հասկնալի եւ կիրարկելի կը դառնայ այն իսկական քրիստոնեայ անհատին, որ իր քրիստոնեական կոչումը կ'ապրի գործով եւ ոչ թէ խօսքով: Սաղմոսերգուն փորձառաքար կը վկայէ ըսելով. «Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, ես որմէ՞ պիտի վախճամ: Տէ՛րն է կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ»: (Սղմ. 26.1): Հետեւաբար սիրելի ընթերցող, դժուարութեան մէջ ես: Մի՛ մտածեր, դիմէ՛ անմիջապէս Աստուծոյ եւ վստահ գիտցի՛ր, որ Տէրը անպայման պիտի լուծէ հարցդ, եւ քեզմէ պիտի հեռացնէ թշնամին: ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ԱՅԼ ՄԻՍԵՆ ՈՒ ՄԻՍԵՆ ՀԱԻԱՏԱ՛ ՈՒ ԱՊԱԻԻՆԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳԱՐԻԷԼ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԵՐԸ



Հրեշտակապետեր՝ Գաբրիելի եւ Միքայելի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին կը գուգադիպի Շաբաթ՝ 8 Նոյեմբերին: Եկե՛ք միասնաբար ծանօթանա՛նք նախ հրեշտակ բառի իմաստին եւ ապա հրեշտակապետերու:

Հրեշտակ բառը կը թարգմանուի պատգամաւոր կամ դեսպան: Հրեշտակները սահմանուած են սպասաւորելու հոգիներու փրկութեան այն մարդոց՝ որոնք պիտի ժառանգեն երկինքի արքայութիւնը:

Թէեւ Աստուծոյ առջեւ ծառայակից ենք հրեշտակներուն հետ, սակայն մեծ է տարբերութիւնը մարդոց եւ անոնց միջեւ:

Ինչպէս սուրբերուն միջեւ կան աւելի վաստակաւորներ, նոյնպէս եւ հրեշտակներու դասերուն մէջ: Անոնցմէ ոմանք ծանօթ են մեզի իրենց անունով եւ կը տօնախմբենք իրենց յիշատակը:

ՄԻՔԱՅԷԼ հրեշտակը ներկայացուած է, որպէս երկնային գօրավար եւ միանգամայն, վերակացու ու պաշտպան Աստուծոյ եկեղեցիին: Երբ Մեծն Կոստանդիանոս իր դարձէն ետք բազմաթիւ եկեղեցիներ շինել տուաւ, ասոնց շարքին հռչակաւոր եղաւ Ս. Միքայել հրեշտակապետի տաճարը: Ըստ աւանդութեան, բարեպաշտ կայսրը Սոսթենիոնի մէջ գտաւ արձան մը, որ կը ներկայացնէր արծիւի թեւերով այր մը: Երբ կայսրը հարցուց, թէ որո՞ւ արձանն էր ան, Միքայել հրեշտակապետը անոր երեւցաւ եւ ըսաւ, որ հոն տաճար մը կանգնէ, որպէսզի հաւատացեալներուն համար ուխտատեղի մը ըլլայ եւ այդտեղ երկնային բարեխօսութիւն գտնեն իրենց հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներուն համար:

Յայսմաւորքները կը գրեն, թէ երբ առաջին անգամ պատարագ պիտի մատուցուէր Ս. Միքայելի անունով կառուցուած եկեղեցիին մէջ, ի ծնէ խուլ եւ համր պատանի մը կանխեց սարկաւազը եւ բարձրաձայն ըսաւ. «Պոսիտումէ», որ կը նշանակէ գոյշ եղե՛ք: Եւ ապա սուրբ հայրապետը ըսաւ. «Ի սրբութիւն սրբոց»:

Ներսէս Շնորհալի իր եղբօր՝ Գրիգորիս կաթողիկոսի խնդրանքով, 100 տուն ոտանաւոր գրեց՝ նուիրուած պանծալի հրեշտակներուն:

Բարի անուանակոչութեան տօն կը մաղթենք բոլոր անոնց որոնք Հրեշտակ, Գաբրիել եւ Միքայել անուններ կը կրեն պահապան հրեշտակները միշտ բոլորին հետ ըլլան: Ամէն:

Հ ՈՓԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԵՐԿՐԱՆՈՐ ԲԺԻՇԿՆԵՐ ԵՒ ԵՐԿՆԱՎՈՐ ԲԺԻՇԿ

Երկրաւոր բժիշկներ հիւանդ մը քննելով կ'ըսեն. «Երկու ամսուայ կեանք ունի», կամ՝ «մէկ տարուայ կեանք ունի», եւլն, իսկ Յիսուս վայն քննելով կ'ըսէ. «Յաւիտենական կեանք ունի»: Երկրաւոր բժիշկներ, երբ սիրտի գործողութիւն պիտի ընեն, հիւանդին ծնողներուն թուղթ ստորագրել կու տան, ցոյց տալու համար որ գործողութիւնը իրենց հաւանութեամբ է որ կ'ըլլայ եւ եթէ գործողութիւնը չյաջողի՝ իրենք (բժիշկները) պատասխանատու չեն: Իսկ մեր Փրկիչը, երբ սիրտի գործողութիւն պիտի կատարէ Սուրբ Հոգիին միջոցաւ, ինք անձնապէս գործողութեան թուղթը կը ստորագրէ՝ գործողութեան յաջողութիւնը երաշխաւորելու համար:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈՓԵՒՈՐ ԳՎԱՐ

Սիրելի ընթերցող, երկրաւոր բժիշկներ կրնան վրիպիլ եւ կեանքը վտանգի տակ առնել, բայց մեր երկնաւոր Բըժիշկը՝ իր կեանքը վտանգի ենթարկեց, առանց երբեք վրիպելու: Վստահէ Յիսուսի: Ան կը սիրէ քեզ: Ան կ'ուզէ եւ կրնա՛յ բուժել քեզ, միայն թէ արտօնութիւնը ծնողներդ չէ՛ որ պիտի տան, այլ՝ դուն:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Զգաստութեան, որպէս նախապայման իմաստութիւն ունեցիր եւ կեանքիդ բոլոր փանապարհներուն խոհեմ եղիր (Առակ. 4):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԱԳՎԱԿԱՆ ԹՎԱՌՈՒՄԻՆ, ՅԱՐՈՒԹԷԱՆ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ, ԿԱՐԳՔ՝ ՍԱՂՄՈՍ 68

Աստուած պիտի ելլէ, եւ իր բոլոր թշնամիները պիտի ցրուին: Զայն ատողները պիտի փախչին իր ներկայութենէն: Ինչպէս ծուխը հովէն կը քաշուի՝ այնպէս պիտի քաշուին, կամ ինչպէս մոմը կրակէն կը հալի՝ այնպէս ամբարիշտները պիտի կորսուին Աստուծոյ ներկայութենէն:

Բայց արդարները Աստուծոյ ներկայութեան պիտի ուրախանան ու ցնծան, ու հրճուանքով պիտի խայտան:

Երգեցէ՛ք ի պատիւ Աստուծոյ, երգով փառաբանեցէ՛ք իր անունը, ճամբայ տուէ՛ք անոր՝ որ կու գայ ամբերուն վրայ նստած: Տէր է անոր անունը, ցնծացէ՛ք անոր ներկայութեան: Որբերուն հայրն է անիկա, այրիներուն դատին պաշտպանը, Աստուած՝ որ իր սուրբ բնակավայրին մէջ է, Աստուած՝ որ միայնակ մնացածին տուն ու տեղ կու տայ, բանտարկեալները դուրս կը հանէ եւ երջանիկ կը դարձնէ, մինչդեռ չոր քարին կը ներկայացնէ սրտով իրմէ ապստամբները:

Ո՛վ Աստուած, երբ քու ժողովուրդդ առաջնորդեցիր, երբ անապատէն կ'անցնէիր, երկիրը շարժեցաւ եւ երկինքը անձրեւ կաթեցաւ քու ներկայութեամբդ, ո՛վ Աստուածը Սիոնին, ... Շարունակել Սաղմոսէն: